ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում են սահմանադրաիրավական պատասխանատվության՝ որպես իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կարևորագույն երաշխիքի՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառության հիմնախնդիրը: Ցույց է տրվում, որ ՀՀ իրավական համակարգում սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառման միասնական մեխանիզմ դեռևս չի մշակվել, և առաջարկվում է ներդնել համապատասխան կառուցակարգ:

Բանալի բառեր – Հայաստանի Հանրապետություն, սահմանադրություն, օրենք, իշխանություն, իրավական պատասխանատվություն, կիրառում:

Սահմանադրաիրավական պատասխանատվության և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառության հիմնախնդիրը տեսական հայեցակարգերում և իրավական պրակտիկայում քիչ արծարծված թեմաներից է և որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ՝ վերջերս է դարձել ուսումնասիրության առարկա: Սահմանադրաիրավական պատասխանատվության արդյունավետ կիրառման առավել նպատակահարմար կառուցակարգերի բացահայտումը կարևոր երաշխիք է պետական ապարատի բնականոն գործունեության և սահմանադրաիրավական նորմերի պահանջների պատշաճ կատարման համար: **Սահմանադրաիրավական պատասխանատվությունը**՝ որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ, երաշխավորում է Սահմանադրության պահպանումը, սահմանադրաիրավական նորմերի գործողության, հասարակական-քաղաքական գործունեության ոլորտի վրա սահմանադրական իրավունքի ազդեցության ապահովումը, ուղղված է Սահմանադրության և օրենքների պահանջների անխախտ կատարման նկատմամբ սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտների հարգանքն ու կարգապահությունն ամրապնդելուն և, վերջապես, դիտվում է պետական մարմինների գործառույթների և լիազորությունների իրականացման արդյունավետության գրավական: Սահմանադրաիրավական պատասխանատվությունը նաև «գործիք է»՝ միտված իրավակարգի պահպան-

մանը, իրավական ռեժիմի հաստատմանն ու քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, որը կարևոր նախապայման է ժողովրդավարության ամրապնդման ու զարգացման համար: Նպատակն է՝ Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի և գործողության ապահովումը, սահմանադրական կարգի և օրինականության պահպանումը, Սահմանադրության պահանջների խախտման դեպքում արդարացի պատասխանատվության կիրառումը պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց նկատմամբ:

Սահմանադրաիրավական նորմերն իրենց կարգադրագրերի պաշտպանության կենսական անհրաժեշտություն ունեն, քանզի իրավունքն առանց պատասխանատվության լոկ հռչակագիր է: Օրինակ, եթե ձևավորվել է նախագահի ինստիտուտը, ապա դրա անքակտելի մասը պետք է լինի նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման՝ պաշտոնանկ անելու հարցը: Եթե սահմանվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, այդ թվում նաև զսպիչների և հակակշիռների կառուցակարգը, պետք է նախատեսվեն խորհրդարանի արձակումը և կառավարությանն անվստահություն հայտնելը՝ որպես սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցներ: Եվ վերջապես, եթե գործում է Սահմանադրական դատարանը, ապա նրա իրավասությանը պետք է վերապահվի պետական մարմինների ակտերը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելը, ինչը նույնպես վկայում է սահմանադրաիրավական պատասխանատվության առկայության մասին:

Որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ՝ սահմանադրաիրավական պատասխանատվությունը նպաստում է սահմանադրական իրավունքի արդիական մի շարք հիմնախնդիրների լուծմանը: Այն նախ և առաջ ապահովում է սահմանադրաիրավական նորմերի գործողությունը և երկրորդ՝ սահմանադրական իրավունքի ազդեցությունը հասարակական-քաղաքական պրակտիկայի վրա: Դրա գործադրումն ու կատարելագործումն անհրաժեշտ են պետության հաստատուն զարգացման, իրավակարգի ամրապնդման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Եվ վերջապես, սահմանադրաիրավական պատասխանատվության առաքելությունն իշխանության մարմինների պատասխանատվության գիտակցումն է հասարակության և պետության առջև: Այն հիմնականում դրսևորվում է խորհրդարանական և խառը կառավարման ձևերի պետություններում և արտահայտվում է խորհրդարանի առջև կառավարության պատաս-

խանատվությամբ: Իսկ խառը կառավարման ձև ունեցող պետություններում պետության գլուխը, որպես կանոն, կիսում է գործադիր իշխանության ոլորտի իր լիազորությունները կառավարության հետ, որը գլխավորում է վարչապետը: Վերջինս էլ իր լիազորությունների իրականացման համար սահմանադրական պատասխանատվություն է կրում երկրի նախագահի կամ խորհրդարանի առջև[1]:

Ի տարբերություն արտասահմանյան որոշ երկրների՝ ՀՀ օրենսդրության մեջ սահմանադրաիրավական պատասխանատվություն արտահայտությունը չի գործածվում, սակայն այս հարցն օրեցօր ավելի արդիական է դառնում՝ հաշվի առնելով սահմանադրական օրենսդրության բուռն զարգացումը: Այսօր Հայաստանում սահմանադրաիրավական նորմերի խախտումը հաճախ անբարենպաստ հետևանքներ չի ունենում «իրավախախտների» համար: Իհարկե, նման իրավիճակը չի կարելի գոհացուցիչ համարել: Անհրաժեշտ է սահմանել սահմանադրաիրավական պատասխանատվության իրացման որոշակի կառուցակարգ, որը կապահովի սահմանադրաիրավական բոլոր սուբյեկտների կողմից իրենց սահմանադրաիրավական պարտականությունների կատարումը: Երկար ժամանակ գիտության մեջ որպես սահմանադրաիրավական նորմերի առանձնահատկություն դիտվում էր դրանցում սանկցիաների բացակայությունը: Եթե նշվում է, որ իրավաբանական պատասխանատվությունը վրա է հասնում իրավական նորմերի կարգադրագրերի խախտման արդյունքում. չէ՞ որ սահմանադրական իրավունքը նույնպես ունի իր համակարգը, որի կառուցվածքային տարրերն են նաև սահմանադրաիրավական նորմերը, ուստի դրանց բովանդակած կարգադրագրերի խախտման դեպքում անխուսափելիորեն վրա է հասնում պատասխանատվություն, որն իրավական աղբյուրների, սուբյեկտների, ծագման հիմքերի առանձնահատկություններով տարբերվում է իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակներից: Առանց սահմանադրաիրավական պատասխանատվության իրավական ամրագրման չափազանց դժվար կլինի դրա հետ կապված թե՛ տեսական դրույթների զարգացումը և թե՛ գործնականում դրա կիրառումը:

Սահմանադրաիրավական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ, ունի հետևյալ հատկանիշները.

---

[1] Տե՛ս **Ղազինյան Բ.,** Պետության գլխի և գործադիր իշխանության փոխհարաբերությունները ՀՀ-ում, Երևան, 2013, էջ 3:

1. այն անխզելիորեն կապված է պետական հարկադրանքի հետ,
2. պատասխանատվության փաստացի հիմքը իրավախախտումն է,
3. այն իրավախախտի համար առաջ է բերում անբարենպաստ հետևանքներ՝ անձնական կամ գույքային բնույթի,
4. պատասխանատվության հետևանքներն ամրագրված են սահմանադրաիրավական նորմերում:

Քիչ չեն դեպքերը, երբ սահմանադրաիրավական պատասխանատվությունը համակցվում է իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների հետ, այսինքն՝ գործ ենք ունենում զուգակցված իրավախախտումների հետ: Մասնավորապես սահմանադրական պատասխանատվությունը զուգակցվում է քրեաիրավական պատասխանատվության հետ, և այս դեպքում, իրավախախտումները և՛ սահմանադրաիրավական են, և՛ քրեաիրավական՝ առաջ բերելով սահմանադրաիրավական և քրեաիրավական հետևանքներ: Տվյալ դեպքում չի կարող խոսք լինել նույն սուբյեկտին երկու անգամ պատժելու (պատասխանատվության կրկնակիության) մասին: Օրինակ՝ խորհրդարանական ընտրությունների քվեարկության արդյունքները կեղծելու դեպքում սահմանադրաիրավական պատասխանատվությունը կարող է դրսևորվել ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելով, իսկ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներին համապատասխան: Այսպիսով, առաջին սանկցիայի հասցեատերերն են ընտրական հանձնաժողովները, թեկնածուները և բոլոր այն անձինք, ովքեր չեն ապահովել ընտրությունների պատշաճ իրականացումը, իսկ երկրորդ սանկցիան կիրառվում է մեղավոր անձանց նկատմամբ՝ քրեորեն պատժելի արարք կատարելու հետևանքով:

Սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների առանձնահատկություններն այն կարևոր չափանիշներն են, որոնցով դրանք տարբերվում են իրավաբանական պատասխանատվության մյուս սանկցիաներից: Խոսենք առավել առանցքային տարբերություններից:

• Առաջին հերթին **սահմանադրաիրավական սանկցիաներն ունեն ընդգծված քաղաքական բովանդակություն**՝ ներառյալ դրանց կիրառման հիմքերն ու սուբյեկտների շրջանակը: Քանի որ սահմանադրական իրավունքը առաջնահերթ կարգավորում է քաղաքական հարաբերություններ, հետևաբար՝ սահմանադրաիրավական պատասխանատվությունն ունի քաղաքական բովանդակություն, իսկ դրա կարգավորումներն ունեն քաղաքական բնույթ, որովհետև պատասխանատվությունը վրա է հասնում հանրային իշխանության

իրականացման ոլորտում խախտումներ կատարելու հետևանքով: *Անհրաժեշտ է զանազանել սահմանադրաիրավական պատասխանատվությունը քաղաքական պատասխանատվությունից*: Սահմանադրաիրավական պատասխանատվությունը, առաջին հերթին, հանրային իշխանության սուբյեկտների պատասխանատվությունն է: Հետևաբար՝ այն պետք է ապահովի հանրային իշխանության գործունեության արդյունավետությունը, իսկ դրա համար կարևոր երաշխիք է վերոնշյալ սուբյեկտների իրավասության և պատասխանատվության ծավալի հավասարակշռվածությունը: Սակայն չի կարելի համաձայնվել այն կարծիքի հետ, որ սահմանադրաիրավական պատասխանատվությունը չունի քաղաքական բովանդակություն: «Սահմանադրաիրավական պատասխանատվությունը քաղաքական պատասխանատվություն է, բայց ոչ ցանկացած, այլ այն, որը սահմանադրական ձև է ստանում»[2]: Սահմանադրաիրավական պատասխանատվությունը չպետք է իրավական գործիքից վերածվի քաղաքական գործիքի: Սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառումը պետք է սահմանափակվի սահմանադրաիրավական ոլորտով, թեպետ քաղաքական հետևանքների վրա հասնելու հնարավորությունը չպետք է իսպառ բացառել:

• **Սահմանադրաիրավական սանկցիաները հիմնականում ունեն հստակ բովանդակություն, այլընտրանքային սանկցիաներ չեն նախատեսում**: Օրինակ՝ ՀՀ Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար (ՀՀ Սահմանադրության հոդ. 141, մաս 1-ին): Այսինքն՝ վերոնշյալ արարքների կատարման դեպքում սահմանադրաիրավական միակ սանկցիան Նախագահին պաշտոնանկ անելն է: Նախագահը պետք է գիտակցի իր նկատմամբ հնարավոր անբարենպաստ հետևանքների առաջացումը՝ իր լիազորությունների պատշաճ կատարման ռիսկով պայմանավորված: Այդ առնչությամբ հարկ է նշել, որ համաշխարհային պրակտիկայում արձանագրվել են սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառմամբ պետության գլխին պաշտոնանկ անելու դեպքեր: Օրինակ՝ 2000 թ. նարկոմաֆիայի հետ կապեր ունենալու և սեփական ժողովրդի փաստացի ցեղասպանության համար պաշտոնանկ արվեց Պերուի նախագահ Ա. Ֆուխիմորին: Իսկ չորս տարի անց Սահմանադրության և տրված երդման խախտ-

---

[2] Տե՛ս **Лучин В.О.** Ответственность в механизме реализации Конституции // Право и жизнь, 1992, N 1, стр. 34:

ման համար պաշտոնանկ արվեց Լիտվայի Հանրապետության նախագահ Ռ. Պակսասը[3]:

• **Սահմանադրաիրավական սանկցիաները կիրառվում են իրավասու սուբյեկտների լայն շրջանակի կողմից**: Օրինակ՝ նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումն Ազգային ժողովն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով՝ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա (ՀՀ Սահմանադրության հոդ. 141, մաս 3-րդ):

• **Սահմանադրաիրավական սանկցիաներ կիրառող սուբյեկտները, ինչպես նաև պատասխանատվության կիրառման հիմքերն ու կարգը բազմազան են**՝ իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների համեմատությամբ: Այս ինստիտուտն ունի համալիր բնույթ, քանզի ընդգրկում է սահմանադրաիրավական տարբեր ինստիտուտների իրավական նորմեր, օրինակ՝ պետության գլխի, խորհրդարանի, կառավարության և դրա անդամների, դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական վիճակը, լիազորություններն ու գործունեության ոլորտները սահմանող նորմերը:

• **Սահմանադրաիրավական սանկցիաները չունեն պատժի դրսևորումներ, և դրանց կիրառումը չի հանգեցնում դատվածության:** Սահմանադրաիրավական պատասխանատվության հիմնական գործառույթն իրավավերականգնիչ գործառույթն է, որի հիմնական նպատակը սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցների վարքագծի կարգավորումն է և հնարավոր իրավախախտումների կանխումը: Սահմանադրաիրավական սանկցիաները՝ որպես սահմանադրական իրավունքի անհրաժեշտ բաղադրատարր, դրանում ղեկավար դեր չունեն, քանզի հասարակական հարաբերությունների վրա ներազդելու համար հարկադրանքը սահմանադրաիրավական ներգործության հիմնական միջոցը չէ:

Անհրաժեշտ է տարբերակել կարգապահական պատասխանատվությունը սահմանադրաիրավական պատասխանատվությունից, թեև դրանք ունեն ընդհանրություններ, քանի որ դրանց սանկցիաները որոշ չափով նման են (օրինակ՝ աշխատանքից ազատումը և պաշտոնանկ անելը), սակայն դրանց միջև կա հստակ անջրպետ: Հիմնական տարբերությունը դրանց կիրառման

[3] Տե՛ս **Бурый Е.В.** Правовые проблемы и пути их решения в условиях развития современного общества. Отрешение от должности как форма конституционной ответственности глав государств. Минск, 2016, стр. 30:

հիմքերի ու ընթացակարգի մեջ է: Առաջին հերթին սահմանադրաիրավական պատասխանատվության հիմքը սահմանադրաիրավական նորմերի խախտումն է, իսկ կարգապահական պատասխանատվությունը կիրառվում է համապատասխան հաստատության ներքին կանոնակարգի խախտման հետևանքով: Երկրորդ, սահմանադրաիրավական սանկցիաները ներառված են իշխանությունների բաժանման և զսպումների ու հակակշիռների համակարգում և կիրառվում են անկախ սահմանադրաիրավական պատասխանատվություն կիրառող մարմնի նկատմամբ սուբյեկտի ծառայողական ենթակայությունից:

Այդ առումով ցանկանում ենք անդրադառնալ մեկ այլ կարևոր հարցի: Կարծում ենք՝ դատավորի կարգապահական պատասխանատվությունը չի համապատասխանում իր սահմանադրաիրավական կարգավիճակին, և այն անհրաժեշտ է փոխարինել սահմանադրաիրավական պատասխանատվությամբ, հատկապես նրա լիազորությունների դադարեցման մասով: Հենց Սահմանադրությամբ են ամրագրված դատավորներին ներկայացվող պահանջները, նրանց նշանակման (ընտրության) կարգը, անկախության, անկողմնակալության և անձեռնմխելիության երաշխիքները, որոնք ապահովում են դատական իշխանության անկախությունն ու ինքնուրույնությունը: Դատավորների սահմանադրաիրավական պատասխանատվության հարցին լուծում տալու համար կարող են որպես հիմք ընդունվել հետևյալ առաջարկները.

1. անհրաժեշտ է ներդնել դատավորների **իմպիչմենտի** ամբողջական կառուցակարգ՝ այդ գործընթաց ներգրավելով նաև օրենսդիր մարմնին: Դատավորների իմպիչմենտը, որը կիրառվում է, օրինակ, ԱՄՆ-ում, բազմիցս ապացուցել է իր արդյունավետությունը՝ որպես սահմանադրաիրավական սանկցիա,

2. օրենսդիրը պետք է հստակ սահմանազատում դնի դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական և սահմանադրաիրավական սանկցիաների միջև,

3. պետք է կարգապահական սանկցիաների շարքից հանել դատավորների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, որը դատավորի նկատմամբ իրավական ներգործության ամենակարևոր միջոցներից է և կիրառվում է դատական իշխանությունից անկախ մարմնի կողմից:

Այսպիսով, հիմք ընդունելով դատավորի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, մեր կարծիքով նրա լիազորությունները պետք է

դադարեցվեն սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցների կիրառմամբ:

Ցավոք, ՀՀ իրավական համակարգում սահմանադրաիրավական պատասխանատվությունը սահմանադրական ամրագրում չի ստացել, և դրա կիրառման միասնական կառուցակարգ դեռևս չի մշակվել, ինչը կարևոր հիմնախնդիր է՝ ծառացած պետության առջև, որովհետև միայն այդպես կարող է երաշխավորվել սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու սահմանադրաիրավական նորմերի պահանջների պատշաճ կատարումը: Անհրաժեշտ է մշակել այնպիսի կառուցակարգ, որն առավել համահունչ կլինի ՀՀ իրավական համակարգի առանձնահատկություններին: Նաև առաջարկում ենք պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անհամատեղելիության պահանջների խախտման դեպքում կիրառել սահմանադրաիրավական պատասխանատվության միջոցներ:

Արտասահմանյան որոշ երկրներում գործում է սահմանադրաիրավական պատասխանատվության օրենսդրական կառուցակարգ, ինչպես նաև հատուկ մարմիններ, որոնց հիմնական գործառույթը սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառումն է: Այդ կապակցությամբ մեր կողմից ուսումնասիրվել է Ավստրիայի և Լեհաստանի Հանրապետությունների իրավական պրակտիկան: Այսպես, սահմանադրաիրավական պատասխանատվության վերաբերյալ դրույթներ է բովանդակում Լեհաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածը, որտեղ նշված են այն սուբյեկտները, որոնք ենթակա են սահմանադրական պատասխանատվության Սահմանադրության կամ օրենքի խախտման համար՝ զբաղեցրած պաշտոնի բերումով կամ իրենց ծառայողական պարտականությունների կատարման ոլորտում, մասնավորապես. «Պետական տրիբունալի կողմից սահմանադրաիրավական պատասխանատվության են ենթակա պետության Նախագահը, Նախարարների խորհրդի նախագահը, այդ թվում նաև խորհուրդի անդամները, Լեհաստանի Ազգային բանկի նախագահը, Վերահսկողական պալատի նախագահը, Հանրային ռադիոյի և հեռուստատեսության խորհրդի անդամները, այն անձինք, ում Նախարարների խորհրդի նախագահը հանձնել է նախարարությունների ղեկավարումը, ինչպես նաև զորքերի գերագույն հրամանատարը:

2. Սահմանադրաիրավական պատասխանատվության ենթակա են նաև պատգամավորներն ու սենատորները 107-րդ հոդվածի սահմանված ծավալով:

3. Պետական տրիբունալի կողմից սահմանված պատասխանատվության տեսակները նախատեսվում են օրենքով»[4]:

Մեր կարծիքով այդպիսի կարևոր լիազորության գործադրման համար առանձին մարմնի ստեղծումն էլ ավելի կհեշտացնի սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառումը: Իսկ Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությամբ նախատեսված պատասխանատվություն է կիրառվում Դաշնության բարձրագույն մարմինների, դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ կատարած իրավախախտումների համար: Իհարկե, ինչ վերաբերում է սահմանադրաիրավական պատասխանատվության առանձին մարմին ստեղծելուն, Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկան այն նախադրյալները, որոնք հող կնախապատրաստեն այդպիսի լուրջ նախաձեռնության իրագործման համար: Եթե նույնիսկ սահմանադրական մակարդակով ամրագրում չի ստացել սահմանադրաիրավական պատասխանատվությունը, ապա խոսք չի կարող լինել այդպիսի լիազորություններով ինչ-որ մարմնին օժտելու կամ համապատասխան մարմին ստեղծելու մասին: Սակայն համապատասխան կառուցակարգ չներդնելը կամ առնվազն հստակ կառուցակարգերի բացակայությունն այսօր կանգնեցրել է շատ լուրջ խնդիրների առջև և խոչընդոտում է պետական ապարատի բնականոն գործունեությունը: Այդ առնչությամբ ցանկանում ենք անդրադառնալ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների կատարման հիմնախնդրին: Սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների բնույթով են մեծապես պայմանավորված պետական իշխանության համակարգում նրանց տեղն ու դերը և Սահմանադրության գերակայությունն ապահովելու հնարավորությունը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով ամրագրված է, որ Սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հոդվածի պահանջների կատարումը, սակայն, ըստ էության, ձևական բնույթ է կրում, քանի որ նշված պատասխանատվության միջոցները դեռևս օրենքով հստակ սահմանված չեն:

Ուսումնասիրելով Սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումները, մասնավորապես 2015 թվականի ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումը՝ կարելի է փաստել, որ այդ որոշումների գերակշռող մասի վերաբերյալ որևէ նախաձեռնություն չի ներկայացվել, և

[4] Տե՛ս Конституции государств Европы. Т. 2. Москва, 2001, стр. 167:

համապատասխան օրենսգրքերում փոփոխություններ չեն կատարվել: Այդ հաղորդման համաձայն՝ 2015 թվականին ՀՀ Ազգային ժողովը, ինչպես նաև ՀՀ կառավարությունը, ՀՀ Սահմանադրական դատարանի 26.06.2015 թ. ՍԴՈ-1222 որոշման ընդունումից հետո նշված իրավական ակտում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չեն անդրադարձել: *Ստեղծված իրավիճակը Սահմանադրական դատարանի կողմից գնահատվում է անընդունելի և իրավական պետության սահմանադրաիրավական պահանջներին ոչ հարիր:* Նման իրավիճակները բացառելու համար օրենքով հստակ կարգավորում պետք է ստանա Սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու գործընթացը:

Իսկապես, օրենսդրի կողմից պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որոնք կապահովեն Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը, սակայն չկան երաշխիքներ կամ որոշակի ժամկետներ, որի ընթացքում Ազգային ժողովը միջոցներ կձեռնարկի կարգավորման ենթակա համապատասխան ոլորտներում: Չէ՞ որ Սահմանադրական դատարանի որոշումներն առավել խնդրահարույց հարցերին տրվող լուծումներ են, և դրանց կատարման նկատմամբ պետք է սահմանվի հատուկ վերահսկողություն, իսկ բովանդակած կարգադրագրերի չկատարման դեպքում անխուսափելիորեն պետք է վրա հասնի սահմանադրաիրավական պատասխանատվությունը: Սահմանադրաիրավական պատասխանատվության միասնական կառուցակարգի արդյունավետ կիրառման համար առաջարկում ենք.

1. սահմանել պատասխանատվության կիրառման հստակ ժամկետներ: Իհարկե, կախված իրավիճակի բարդությունից ու լուծման ժամանակատարությունից, հնարավոր է սահմանել համապատասխան միջոցների կիրառման նվազագույն և առավելագույն ժամանակահատվածը,

2. սահմանել սահմանադրաիրավական պատասխանատվության ենթակա սուբյեկտների իրավունքների երաշխիքները: Սուբյեկտին պետք է հնարավորություն ընձեռվի ներկայացնելու բացատրություններ ու պարզաբանումներ սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառման հիմքերի վերաբերյալ,

3. Սահմանադրության և օրենքների խախտման համար որպես սահմանադրաիրավական պատասխանատվություն կիրառող նախատեսել այն մարմնին, որը կարող է վերոնշյալ գործողություններին համապատասխան իրավական գնահատական տալ: Այդ կապակցությամբ կարելի է առաջնորդվել, օրինակ, Լեհաստանում գործող սահմանադրաիրավական պատաս-

խանատվություն կիրառող հատուկ մարմնի վերաբերյալ դրույթներով: Այդպիսի խախտումներին արձագանքելը պետք է լինի այդ մարմնի իրավունքն ու պարտականությունը,

4. սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառման գործընթացի ժամանակ կասեցնել համապատասխան սուբյեկտի պաշտոնեական պարտականությունների կատարումը՝ մինչև գործընթացի ավարտն ու համապատասխան որոշման ընդունումը,

5. սահմանադրաիրավական պատասխանատվության ենթակա սուբյեկտին իրավունք վերապահել բողոքարկելու իրավասու մարմին իր նկատմամբ սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառման մասին որոշումը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք՝ վերոնշյալ առաջարկների իրացումը կնպաստի սահմանադրաիրավական պատասխանատվության կիրառման կառուցակարգի ներդրմանը Հայաստանի Հանրապետությունում, ինչը կխթանի պետական ապարատի բնականոն և արդյունավետ գործունեությունը:

СУЩНОСТЬ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ И ПРОБЛЕМЫ ЕЕ ПРИМЕНЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МЕРИ ХАЧАТРЯН

Конституционно-правовая ответственность наиболее важная гарантия принципа разделения властей, для полного соблюдения Конституции и законов. Миссия конституционно-правовой ответственности заключается в том, чтобы органы всех ветвей власти четко осознали свою ответственность в государстве и перед обществом. Механизм правовой системы реализации конституционной ответственности в Республике Армения до сих пор, к сожалению, не разработан, что и является проблемой, с которой сталкивается страна. Необходимо разработать наиболее подходящий механизм для его эффективного действия, который будет обеспечивать защиту прав и законных интересов граждан.

Ключевые слова – Республика Армения, конституция, закон, власть, правовая ответственность, применение.

THE ESSENCE OF THE CONSTITUTIONAL & LEGAL RESPONSIBILITY OF RA AND ITS IMPLEMENTATIONAL ISSUES

MERI KHACHATRYAN

This article is concerned with the constitutional and legal responsibility as the most important guarantee of the principle of Checks and Balances, aiming at upholding the Constitution and laws. Moreover, the basic issue of the constitutional and legal responsibility is to make the authorities be aware of their responsibilities toward the country and society. In this article, Meri Khachatryan conveys that a mechanism for the implementation of the constitutional and legal responsibility in RA has not as yet been devised. Khachatryan proposes an appropriate mechanism to be put into effect to ensure the protection of the rights and legal interests of the citizens.

Key words – The Republic of Armenia, the constitution, law, authority, legal responsibility, application.